

ԹԷ ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ԹՐԷԲՈՆԵՄԱԸ

ԳԱՄ ԻՆՉ Է ՍԻՖԻԼԻՍԸ(*)

ԱՐԻԻՆԻ ՔՆՆՈՒԹԻՆՈՒԸ

Ձեզմէ շատեր լսած են թէ՝ արեան քննութիւնով կարելի է հասկնալ թէ, մէկը սիֆիլիս ունի՞ թէ ոչ և թէ երբ այդ քննութիւնը դրական է՝ (փոզիթիւ) սիֆիլիս կալ, և եթէ ժխտական է՝ (նէկա-թիւ) սիֆիլիս չկայ:

Խնդիրը այդքան ալ պարզ չէ:

Երբ մէկու մը մարմինն մէջ մտնեմ, նախ չարկեղը կը շինեմ մորթին վրայ և յետոյ, հետզհետէ կը թափանցեմ ներքին գործա-րաններուն մէջ, Որքան ատեն որ կայտառ ու առողջ եմ, և դեղերով սաստիկ տկարացած չեմ, կ'արտադրեմ այնպիսի նիւթեր, ըսենք «թոյներ», որոնք զոհիս արիւնին կը խառնուին և անոր կուտան մասնաւոր յատկութիւն մը՝ զորս մօտ 20 տարի առաջ գտաւ գեր-մանացի գիտուն մը՝ վասերման:

Երբ որեւէ արիւն ամանի մը մէջ դնէք և ձգէք որ «պաղի», եր-կու մասի կը բաժնուի. տակը կարմիր, հաստատուն մաս մը որ արե-ան կարմիր գնդիկները կը պարունակէ. իսկ վրան՝ դեղնորակ հե-ղուկ մը որ արեան շիճուկն է (serum):

Վասերման՝ ոչխարի արեան կարմիր գնդիկները խառնեց զանա-զան շիճուկներու, ուրիշ նիւթերու ներկայութեան և զանազան պայ-մաններու տակ որոնց խելքս շատ չի հասնիր և դուք ալ գիտնալու պէտք չունիք: Ան նկատեց որ ֆրանկախտաւորներու շիճուկը, այս պայմաններուն մէջ չի լուծեր ոչխարի արեան գնդիկները և եզրա-կացուց. —

Երբ արեան քննութիւնը դրական է (Réaction de Wassermann positive), այսինքն երբ մէկու մը արեան շիճուկը չի հալեցնել որչ-խարի արեան գնդիկները, այդ կը նշանակէ թէ այդ շիճուկին մէջ Թրէբոնէմի «թոյներ» կան, հետեւաբար այդ անձին մարմինն որեւէ մէկ մասին մէջ Թրէբոնէմ գոյութիւն ունի, աւելի պարզ՝ այդ մար-դը սիֆիլիս ունի: Գրեթէ առանց բացահոլութեան այսպէս է, երբ նոյն իսկ հիւանդը իր սիֆիլիս ունեցած ըլլալը չի գիտեր և կամ տարի-ներ առաջ վարակուած ու դարմանուած է և անկէ ի վեր որեւէ վէրք ունեցած չէ:

(*) Ցես «Բուժանքի Ա. տարի, Թիւ 1, 2, 4, 6, 8, 10, 11, 12, կամ նոյն խորա-գրով նոր լոյս տեսած գրքովը, որ կը պարունակէ մինչեւ այժմ հրատարակուած եւ աս-կէ ետք հրատարակելի յօդուածաշարքին ամբողջութիւնը:

Բայց հակառակը ճիշտ չէ. այսինքն երբ մէկու մը արեան քրն-
նութիւնը ժխտական է այդ կը նշանակէ թէ.—

Այդ արիւնին մէջ բնաւ չեմ մտեր (բնաւ սիֆիլիս չէ առած),
կամ մտած եմ բայց անհետացած (սիֆիլիս առած է, բայց բուժ-
ուած է),

կամ մտած եմ, բայց դեռ ժամանակ չեմ ունեցած թոյնս արտա-
տադրելու (չարկեղը շինելէ ետք մինչեւ 12—17 օր):

Եւ կամ գեղերու ու տարիքի ազդեցութեան տակ տկարացած
եմ, մարմինն մէկ անկիւնը քաշուած եմ ու առժամապէս ի վիճակի
չեմ թոյն արտադրելու:

Կը տեսնէք թէ որքան հակասական նշանակութիւններ ունի
արեան ժխտական քննութիւն մը: Բժիշկները, հիմնուելով հիւան-
դին անցեալին, կրած դարմանումին, արեան նախապէս կատարուած
քննութիւններու, արդիւնքին և ուրիշ կարգ մը պարագաներու վրայ
կրնան որոշ եզրակացութիւն մը հանել, երբ արեան քննութեան պա-
տասխանը ժխտական է: Բայց վստահ կրնաք ըլլալ թէ շատ անգամ
դանտնք նեղ կացութեան մէջ կը դնեմ: Տեսնելու էք թէ խեղճերը
որքան նեղութիւն կը քաշեն սիֆիլիսով վարակուած և քիչ — շատ
դարմանուած իրենց հիւանդները համոզելու որ, արեան քրն-
նութեան ժխտական պատասխան մը՝ բուժում չի նշանակել: Բարե-
բախտաբար զոհերս շատ անգամ ականջ չեն կախեր և տեսնելով որ
ոչ ցաւ ունին, ոչ վէրք և իրենց արիւնն ալ «մաքուր» է, չեն շա-
րունակեր դարմանուիլ ու յաճախ գէշ կարծիք ալ կը կազմեն իրենց
բժիշկին մասին: Ու յանկարծ օրին մէկը, տարիներ վերջ, տեղէ մը
ծայր կուտամ, ապշահար ու սարսափահար ձգելով զոհերս:

Գանք այժմ ձեզ հետաքրքրող հարցին, Ֆրանկախտաւոր մը կըը-
նա՞յ ամուսնանալ եւ ի՞նչ պայմաններու մէջ:

(Շարունակելի)

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՄԱՀԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԵՏՍՉՀԵՏԷ Կ'ԱԻԵԼՆԱՅ

Անցեալ տարի 1432000 մահ պատահած է, նախորդ տարուէնէ
53000 աւելի: 100000 հոգիի վրայ 127 հոգի մեռան սրտի հիւան-
դութենէ, 88 թոքատապի հետեւանքներէն 81 քաղցկեղէ, 56
կաթուածէ, 25 էնֆիւէնցայէ, 16 հոգի ինքնաշարժի արկածէ,
12 անձնասպանութեան և 5 ալ ոճիրի հետեւանքով:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱՅԽՍԹԱԿԸ վերջերս օրէնք մը քուէարկեց
որու նպատակն է մանուկները և պատանիները պաշտպանել
պոռնկագրական հրատարակութիւններու դէմ: